Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Strong CSOs for Stronger Armenia

ՀՐԱՎԵՐ

Հարգելի գործընկերներ,

Սիրով հրավիրում ենք ձեզ մասնակցելու մեկօրյա տեղեկատվական աշխատաժողովի, որն իրականացվում է «Աջակցություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից ՀՀ-ի համար Եվրոպական հարևանության գործիքի ներքո: Ծրագրի համարն է՝ ԵՀՀԳ/2015/363-324:

Աշխատաժողովի նպատակն է հնարավոր շահառուներին տրամադրել համապարփակ տեղեկատվություն Կարողությունների զարգացման (ԿԶ) փաթեթի վերաբերյալ, որը պետք է իրագործվի ծրագրի շրջանակներում 2016թ. հուլիս ամսից սկսած՝ մասնակցության կանոններ, համապատասխանելիության չափանիշներ, բաղադրիչներ և այլն: Միջոցառման մի մասը կլինի փորձնական հատված, որը թույլ կտա մասնակիցներին ծանոթանալ կարողությունների զարգացման առաջարկվող մեթոդներին և նպաստել ԿԶ փաթեթի վերջնական մշակմանը:

Մենք նաև կցանկանայինք տեղեկանալ վերոնշյալի վերաբերյալ ձեր նկատառումներին, որպեսզի փաթեթի մանրամասները մշակվեն ձեր կազմակերպությունների կարիքներին և ակնկալիքներին համապատասխան:

Ձեր իսկ հարմարության համար աշխատաժողովները կանցկացվեն Գյումրիում, Ծաղկաձորում, Գորիսում և Երևանում: **Մասնակիցները կընտրվեն առաջինը դիմելու և ընտրվելու սկզբունքով:** Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ **մեկ կազմակերպությունից առավելագույնը 2 մասնակից** կընտրվի (ենթակա է հաստատման ծրագրային թիմի կողմից): Այն դեպքում, երբ միջոցառման մասնակցության դիմումների թիվը կգերազանցի առկա տեղերի քանակը, լրացուցիչ աշխատաժողովներ կկազմակերպվեն առավել հարմար վայրերում բոլոր դիմորդներին միջոցառմանը մասնակից դարձնելու համար: Առաջին տեղեկատվական աշխատաժողովները տեղի կունենան հետևյալ հերթականությամբ՝

Գյումրի - 2016թ. մայիսի 30
Ծաղկաձոր - 2016թ. մայիսի 31
Գորիս - 2016թ. հունիսի 2
Երևան - ամսաթիվը ենթակա է հաստատման

Միջոցառման անցկացման վայրի հասցեն կհաղորդվի ընտրված մասնակիցներին: Տեղեկացնում ենք, որ տրանսպորտային ծախսերը պետք է հոգան մասնակիցները:

Տեղեկատվական աշխատաժողովին դիմելու համար խնդրում ենք լրացնել կից հայտի ձևը և ուղարկել այն ծրագրին հետևյալ էլ. հասցեով՝ info@civilsociety.am մինչև ս/թ մայիսի 26-ը ժ. 23:59:

Սիրով սպասում ենք ձեր դիմումներին:

Հարգանքով՝

Յարոսլավ Զարիխտա
Ծրագրի ղեկավար
ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» ծրագիր

ՕՐԱԿԱՐԳ

10.00 – 11.30

- Աշխատաժողովը վարողների, նպատակի և օրակարգի ներկայացում
- Կլոր սեղան/մասնակիցների ներկայացում
- Տեղեկատվություն ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» ծրագրի և Կարողությունների զարգացման փաթեթի վերաբերյալ՝ կառուցվածք և բաղադրիչներ, համապատասխանելիության չափանիշներ և հավաքագրման կանոններ, շահառուների իրավունքներ և պարտավորություններ:
- Վերոնշյալի վերաբերյալ քննարկում և մասնակիցների նկատառումների հավաքագրում:

11.30 – 11.45

ՍՈՒՐՃԻ ԸՆԴՄԻՋՈՒՄ

11.45 – 13.15

- ԿԶ փաթեթի և նախագծերի նախապատրաստման վերաբերյալ սեսիա մասնակիցների ակտիվ ներգրավվածությամբ (անհատական և խմբային վարժություններ)

13.15 – 14.00

ՃԱՇԻ ԸՆԴՄԻՋՈՒՄ

14.00 – 15.00

- ԿԶ փաթեթի և նախագծերի նախապատրաստման վերաբերյալ սեսիա մասնակիցների ակտիվ ներգրավվածությամբ (անհատական և խմբային վարժություններ) - շարունակություն
- Ներկայացված հարցերի շուրջ մասնակիցների նկատառումների հավաքագրում

15.00-15.30
- Աշխատաժողովի ամփոփում